PMMG

Վրաստան
Նախագահական ընտրություններ
27 հոկտեմբերի, 2013 թիվ

Ընդհանուր քաղաքացիական շարժում
«ԲԱԶՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆ»-Ի

դիտորդական ծրագրի վերջնական հաշվետվությունը

Վրաստան
Նախագահական ընտրություններ
27 հոկտեմբերի, 2013 թիվ

Ընդհանուր քաղաքացիական շարժում «ԲԱՁՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆ»-Ի (PMMG) դիտորդական ծրագրի վերջնական հաշվետվությունը

2013 թվականի հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրությունների դիտորդական ծրագիրն իրականացվեց Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI), Ազգային վաստակ ժողովրդավարության համար (NED), Եվրոպական վաստակ ժողովրդավարության (EED) և «Ղիա սազոգադոեբա- Սաքարթվելոս» («Բաց հասարակությունը՝ Վրաստանին» (OSGF) ֆինանսական աջակցությամբ:

Դիտորդական ծրագրի վերջնական հաշվետվության բովանդակությունը չի արտացոլում դոնորների կարծիքները և դրան ամբողջությամբ պատասխանատու է «ԲԱՁՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆԸ»:

Թբիլիսի, Վրաստան
28նոյեմբերի, 2013 թ.

Ցանկ

1. Դիտորդական ծրագրի արդյունքների համառոտ ամփոփում 3

2. Ընդհանուր տեղեկություն 2013 թվականի նախագահական ընտրությունների մասին 5

3. Ընդհանուր քաղաքացիական շարժում «ԲԱԶՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆԻ» ներգրավվումը 2013 թվականի նախագահական ընտրությունների դիտորդական ընթացակարգի մեջ 10

4. Ընտրությունների օրը 14

5. Քվեարկության հետ կապված բողոքներ և հայցեր 16

6. Ընտրությունների արդյունքները 20

7. Հիմնական հայտնություններ/եզրակացություններ 21

8. Հանձնարարություններ 23

9. Տեղեկություն Ընդհանուր քաղաքացիական շարժում .«ԲԱԶՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆԻ» մասին 25

1. Դիտորդական ծրագրի արդյունքների համառոտ ամփոփում

Ընդհանուր –քաղաքացիական շարժում Բազմազգ Վրաստանը 2013 թվականի հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրությունների համար իրականացրեց ընտրական օրվա և ընտրություններին հաջորդող ժամանակաշրջանի դիտորդական ծրագիրը Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի տարածաշրջաններում մտնող մի շարք ընտրական մարզերի ընտրական տեղամասերում, որտեղ էթնիկական փոքրամասնությունների քանակը կազմում է տեղական բնակչության 30 տոկոսից ավելին:

Չնայած ընտրությունների օրը, կազմակերպության կարճժամկետ դիտորդների կողմից տեղամասի բացման և կարգավորման, ձայն տալու, ձայների հաշվման և արդյունքների ամփոփման ընթացակարգում բացահայտված որոշ խախտումների, «Բազմազգ Վրաստանը» գտնում է, որ 2013 թվականի նախագահական ընտրությունները համապատասխանում էր ընտրական ընթացակարգի թափանցիկության և արդարացիության տեղական, նաև միջազգայնորեն ընդունված նորմաներին: Այն տեղամասերում, որտեղ կազմակերպությունն իրականացնում էր դիտարկումը, էթնիկական փոքրամասնությանը (ընտրողներին) հնարավորություն տրվեց ձայն տալու իրավունքն իրականացնել մրցակցային պայմաններում:

Կազմակերպության դիտորդների մեծամասնությանը անսահմանափակ հնարավորություն տրվեց իրականացնել դիտորդումը ընտրության օրվա բոլոր ընթացակարգերում: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում ձայն տալու օրը «Բազմազգ Վրաստանի» կողմից ընդամենը ներկայացված էր 20 բողոք: Բողոքների հիմքն են հանդիսացել հիմնականում տեղամասի բացման և կարգավորման, ձայն տալու և ձայները հաշվելու ընթացքում բացահայտված խախտումները:

Քվեարկման ընթացքն ավարտելուց հետո «Բազմազգ Վրաստանի կողմից» մարզային ընտրական հանձնաժողովներին ներկայացվեց 216 բողոք, որոնց մեծամասնությունը ներկայացնում էր ընթացակարգային բնույթի խախտում, ինչը էական ազդեցություն չունեցավ ընտրական գործընթացի օրինականության վրա:

Դատարանում բողոքարկվեց բողոքների բավարարումը մերժելու մասին մարզային ընտրական հանձնաժողովի կողմից ըմդունված 15 որոշում, որոնցից 3-ը լրիվ բավարարվեց, իսկ 4-ին ընթացք չտրվեց բողոքարկման ժամկետի անցման պատճառով:

Դիտորդականն ծրագրի գնահատման աղբյուրը

„Բազմազգ Վրաստանի“ կողմից ընտրական օրվա դիտորդական ընթացակարգի ընթացքը, նաև նրան հաջորդող ժամանակամիջոցը գնահատվել է հետևյալ իրավաբանական գործիքների տեսակետից, ԵՅՀՈ-Ն «Անդամ պետությունների համար սահմանված ժողովրդավարական ընտրությունների պարտավորությունները», (ընտրական նյութերում լավ պրակտիկայի օրենսգիրք» (Վենեցիայի հանձնաժողով), «Կոպենհագենի փաստաթուղթ», ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային չափանիշներ և Վրաստանի ընտրական կանոնադրություն:

Աջակցություն ընտրական գործընթացում էթնիկական փոքրամասնությունների ներգրավման հարցում

2013 թվականի նախագահական ընտրությունների ընտրական վարչությունը ուշադրություն դարձրեց էթնիկական փոքրամասնության խնդրին: ԿԸՀ-ը էթնիկական փոքրամասնության համար իրականացրեց այլևայլ տեսակի ընտրողների էլեկտորալ կրթությանը կողմնորոշված ծրագիր: Նրա կողմից հայերեն և ադրբեջաներեն լեզուներով

թարգմանվեց և տպագրվեց մի շարք ընտրական փաստաթղթեր: Էթնիկական փոքրմասնության ներկայացուցիչներ հանդիսացող ընտրողներին տեղեկատվություն հաղորդելու նպատակով ԿԸՀ-ն Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գործող հեռուստատեսային ընկերությունների օգնությամբ իրականացրեց մի շարք տեղեկատվական բնույթի ակտիվներ: Նա նաև ապահովեց էթնիկական փոքրամասնություններով բնակեցված շրջաններում բնակչության համար տեղեկատվական- իմացական բնույթի արտահանդիպումների կազմակերպումը:

Ընտրական վարչության էթնիկական կազմը

Բազմազգ Վրաստանի դիտորդական ծրագրի սահմաններում հայտնաբերված տեղեկություններին համապատասխան, այն ընտրական տեղամասերում, որոնց դիտարկում էր կազմակերպությունը, ընտրական հանձնաժողովը, հիմնականում փոքրամասնությամբ բնակեցված շրջաններում, կոմպլեկտավորված էր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներով, կոնկրետ, 182 ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամները փոքրամասնության ներկայացուցիչներն էին: Այն 200 ընտրական տեղամասերից, որոնց դիտարկում էին «Բազնազգ Վրաստանի» դիտորդները, 136 ընտրական տեղամասում հանձնաժողովի քարտուղարը կամ նախագահը ազգային փոքրամասնության ներկայացուցիչ էր: 176 ընտրական տեղամասում ազգային փոքրամասնություններին պատկանող ընտրական տեղամասային անդամների մեծամասնությունը տիրապետում էր պետական լեզվին:

Ընտրական վարչության կոմպլեկտավորման Գենդերյան հայեցակետը

Այն տեղամասերում, որտեղ կազմակերպությունն իրականացրել է դիտարկումը, ընտրական վարչության կազմում կանայք լայն սպեկտրով էին ներկայացված, չնայած նրանք որոշումներ կայացնելու իրավունք ունեցող աշխատողների դիրքեր քիչ էին զբաղեցնում (նախագահ կամ քարտուղար): Մասնավորապես, 192 ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամների մի մասը կանանցից էր կազմված, իսկ նախագահի կամ քարտուղարի դիրք 51 կին էր զբաղեցնում:

Ընդհանուր առմամբ, չնայած ձեռք բերված որոշակի առաջընթացի, էլեկտորալ պայմանները կարիք ունեն հետագա զարգացման, որպեսզի լիարժեք լինեն ապահովված ընտրողների, այդ թվում էթնիկական փոքրամասնությանը պատկանող անձանց, ընտրական իրավունքների պաշտպանման սեփական քաղաքական ընտրության կատարումը մրցակցային պայմաններում: Նշված նպատակով հարկավոր է, քաղաքական հասարակական և միջազգային կազմակերպությունները , նաև ընտրական վարչությունը աջակցեն ընտրողներին, այդ թվում էթնիկական փոքրամասնություններին պատկանող անձանց էլեկտորալային իմացության մակարդակի բարձրացման գործին և այդ ուղղությամբ իրականացնեն համապատասխան ծրագրեր, նաև անհրաժեշտ է քաղաքական կազմակերպությունների լայն ընդգրկումը ընտրողների էլեկտորալ իմացության մակարդակի բարձրացման գործընթացում:

- ԿԸՀ զարգացնի ընտրական վարչության պաշտոնյաների, այդ թվում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց էլեկտորալային իմացությունը և արհեստավարժական ունակությունները և այդ ուղղությամբ իրականացնի ընտրական վարչության անդամների արհեստավարժորեն պատրաստման ուսումնա-ճանաչողական բնույթի ծրագրերը.
- Ընտրական վարչությունը օգնի փոքրամասնությունների լեզվով դիմում/բողոք կազմելու և քննարկման պրակտիկայի արմատավորման հարցում և այդ ուղղությամբ ապահովի համապատասխան կարգավորումների մշակումն ու ընդունումը.
- Վրաստանի խորհրդարանը ապահովի ընտրական օրենսգրքի մեջ փոփոխություններ մտցնելը, ինչի հիման վրա էլ կկատարելագործվի, կպարզվի և հնարավոր կդառնան բողոքների և հայցերի կազմման և քննարկման ընթացակարգերը:

2. Ընդհանուր տեղեկություններ 2013 թվականի նախագահական ընտրությունների մասին

2.1 Իրավական հիմքեր

Վրաստանի նախագահի 2013 թվականի հուլիսի 4-ի # 04/07/01 «Վրաստանի նախագահի ընտրությունների ժամկետի նշանակման մասին» կարգադրության հիման վրա Վրաստանի Սահմանադրության 70-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն Վրաստանի նախագահի հերթական ընտրությունները նշանակվեց 2013 թվականի հոկտեմբերի 27-ին: Սահմանադրության համաձայն Վրաստանի նախագահը ընտրվում է ուղղակի կարգով, 5 տարվա ժամկետով:

2.2 2013 թվականի նախագահական ընտրությունների նշանակությունը

Նախագահական ընտրությունները առանձնահատուկ երևույթ էր ներկայացնում Վրաստանի նորագույն պատմության մեջ այնքանով, որքանով 2013 թվականի հոկտեմների նախագահական ընտրություններից հետո Վրաստանի Սահմանադրության այն կետերը պետք է վերացվեին, որոնցով նախագահի լիազորությունների սահմանափակման հաշվին կայուն պետք է աճեր վարչապետի լիազորությունները: Ամեն մի նշվածը առանձնահատուկ քաղաքական լարվածություն էր տալիս ընտրական գործընթացին:

2.3 Ընտրությունների վարչայնացումը

2013 թվականի նախագահական ընտրությունների ադմինիստրացումն իրականացվեց եռաստիճան ընտրական վարչության կողմից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ), 73 մարզային և 3741 ընտրական տեղամասի հանձնաժողովները (այդ թվում բացառիկ դեպքերում ստեղծված տեղամասերը(34) և այլ պետություններում ստեղծված տեղամասերը:)

2.4 Աջակցում ընտրական գործընթացում էթնիկական փոքրամասնության ներգրավման խնդրին

2013 թվականի նախագահական ընտրությունների կապակցությամբ վարչությունն ուշադրություն հատկացրեց ազգային փոքրամասնության հարցին: ԿԸՀ-ում գործում է հատուկ աշխատանքային խումբ ազգային փոքրամասնության ընտրողների համար՝ ընտրական ընթացակարգերը պարզելու և այդ հարցում նրանց օգնելու նպատակով

ԿԸՀ-ի կողմից հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ ընտրական փաստաթղթերը. տեղամասային ընտրական հաննձնաժողովի անդամների ձեռնարկ հրահանգ, տեղամասային ընտրական հանձնաժոցովի նախագահի հիշելի հրահանգը, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամների ֆունկցիաները, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը, քվեարկողներին գրանցող հանձնաժողովի անդամի ֆունկցիաները, ընտրական արկղի և հատուկ ծրարների վերահսկող հանձնաժողովի անդամի ֆուկցիաները, շարժական ընտրական արկղը ուղեկցող հանձնաժողովի անդամի ֆունկցիաները, տեղամասային ընտրական հանձնաժողովում պատին փակցվող, քվեարկության շենքի և ընթացակարգերն արտացոլող պոստերի, թեսթեր տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վարժանքների համար, քվեարկողների հութա/ֆլաեր, , պրես/ռելիզներ, ընտրական քվեաթերթիկի լրացման

շրջանակ/ձևի օգտագործման մասին ինստրուկցիա, քվեաթերթիկի լրացման կարգը, «Քվեարկության օրվա ընթացակարգերը» ուսուցողական ֆիլմը (հայերեն և ադրբեջաներեն լեզուներով սուբտիտորներով, ընտրողների տվյալների քարտերը, ԿԸՀ զովազդային / տեղեկատվական տեսա-հոլովակները, ընտրողների ամբողջական ցուցակը, ընտրական քվեաթերթիկները (վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն):

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների տեղեկատվության նպատակով, ԿԸՀ-ն իրականացրեց հետևյալ ակտիվությունները. ՍԱմցխէ Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանների եթերով հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանեց ԿԸՀ-ի 9 զովազդային հոլովակ, որոնք դուրս եկան հետևյալ շրջանային հեռուստատեսությունների եթերով. Ախալցիխե-հեռուստաընկերություն «9-րդ ալիք», Ախալքալաքի-հեռուստաընկերություն «ԱՏՎ 12», Նինոծմինդա–հեռուստաընկերություն «Փարվանա», Բոլնիսի- հեռուստաընկերություն «Բոլնելի», Ռուսթավի – «Քվեմո Քարթլիի հեռուստա-ռադիո ընկերություն» (Ռուսթավի, Մառնեուլի, Գարդաբանի), Մառնեուլի-հեռուստաընկերություն «Մառնեուլի TV”.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք-էջին (www.cesko.ge) 2012 թվականին տեղադրված են ազգային փոքրամասնությունների լեզուներով (հայերեն և ադրբեջաներեն) 2013 թվականի նախագահական ընտրությունների համար թարգմանված ընտրությունների նյութերը: Նշված տեղեկատվությունը տեղադրվեց նաև սոցիալական ցանցում, ԿԸՀ –ի պաշտոնական Facebook էջում:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար հավասար ընտրական պայմաններ ստեղծելու նպատակով, ԿԸՀ պաշտոնական կայք-էջում (www.cesko.ge),տեղադրեց ընտրողների ամբողջական ցուցակում եղած տվյալները, կոմպակտ բնակեցված տարածաշրջաններում բնակեցված ազգային փոխրամասնության ներկայացուցիչ ընտրողների համար (Գարդաբանիի, Մառնեուլիի, Բոլնիսիի, Դմանիսիի, Ծալկայի, Թեթրիծղարոյի, Ախալցիխեի, Ախալքալաքիի և Նինոծմինդայի մարզային ընտրական հանձնաժողովներում գրանցված ընտրողների համապատասխան) մատչելի էր հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Վրաստանի նախագահի ընտրությունների համար ԿԸՀ կոնտակտ-կենտրոնի օպերատորները ազգային փոքրամասնության ներկայացուցիչ-ընտրողներին, ընտրական հարցերի շուրջ տեղեկությունները տրվում էին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Վրաստանի նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 27-ի ընտրությունների համար, ԿԸՀ-ն ապահովեց արտագնա հանդիպումների կազմակերպումը ազգային փոքրամասնությամբ կոմպակտ բնակեցված հետևյալ շրջաններում. Մառնեուլիի շրջանի Սադախլո, Թազաքենդ, Ազիքենդ, Ալգեթի գյուղերում, Ծալկայի շրջանի Այազմա և Փարիզի գյուղերում, Բոլնիսի շրջանի Ցուրտավի և Նախիդուրի գյուղերում, Գարդաբանիի շրջանի Գաչիանի և Քեսալո գյուղերում, Ախմետիի շրջանի Դուիսի (Պանկիսի կիրճ), Ղվարելիի շրջանի Մթիսձիրի գյուղում: Հանդիպումների արդյունքում տեղական բնակչությունը տեղեկացվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Վրաստանի նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 27-ի ընտրությունների համար ազգային փոքրամասնությունների նկատմամբ պլանավորած միջոցառումների մասին:

2.5. Ընտրական վարչության էթնիկական կազմը

Էթնիկական փոքրամասնությամբ կոմպակտ բնակեցված տեղամասերի քանակը՝ ընտրական մարզերի համաձայն

Էթնիկական փոքրամասնությամբ կոմպակտ բնակեցվածներին հաշվի առնելով, ԿԸՀ-ն բացեց 338 տեղամաս 12 ընտրական մարզում.

Մարզի անվանումը	**Տեղամասերի քանակը**
# 11 Սագարեջո (*որմուղալո*)	12 տեղամաս
# 15 Լագոդեխի (Կաբալի)	6 տեղամաս
# 17 Թելավի (Ղարաջալա)	4 տեղամաս
#21 Գարդաբանի	32 տեղամաս
# 22Մառնեուլի	81 տեղամաս
# 23 Բոլնիսի	42 տեղամաս
# 24 Դմանիսի	32 տեղամաս
# 25 Ծալկա	16 տեղամաս
# 26 Թեթրիծղարո	5 տեղամաս
# 37 Ախալցիխե	8 տեղամաս
# 40 Ախալքալաքի	63 տեղամաս
# 41 Նինոծմինդա	36 տեղամաս
Գումարը	**338 տեղամաս**

Ընտրական վարչության էթնիկական կազմը

ԿԸՀ-ից ստացված տվյալների համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների միջև 2541 էթնիկական փոքրամասնության ներկայացուցիչներ կային, այդ թվում 1502 հայ, 996 ադրբեջանցի, 16 օս, 15 ռուս, 11 ավարացի և 1 ուկրաինացի:



Ադրբեջանական ծագումով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և տեղակալի քանակը ընտրական մարզերի համաձայն.



Հայկական ծագումով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի , քարտուղարի և տեղակալի քանակը ընտրական մարզերի համաձայն.



«Բազմազգ Վրաստանի» դիտորդական ծրագրի շրջանակներում հայտնաբերած տեղեկատվության համապատասխան այն ընտրական տեղամասերում (ընդամենը 200 ընտրական տեղամաս), որոնց դիտարկում էր կազմակերպությունը, ընտրական վարչությունը կոմպլեկտավորված էր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներով, մասնավորապես 182 ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամներն էին

ազգային փոքրամասնության ներկայացուցիչները:
176 ընտրական տեղամասում ազգային փոքրամասնություններին պատկանող հանձնաժողովի անդամների մեծամասնությունը տիրապետում էր պետական լեզվին: Այն 200 ընտրական տեղամասից, որոնց դիտարկում էին «Բազմազգ Վրաստանի» դիտորդները, 136 ընտրական տեղամասում հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ էին:

2.6 Ընտրական թեկնածուները

ԿԸՀ-ի կողմից ներկայացված տվյալների համաձայն, 2013 թվականի նախագահական ընտրություններին գրանցվել է 23 թեկնածու, որոնցից ոչ մեկը Վրաստանում բնակվող այս կամ այն էթնիկական խումբ չի ներկայացրել.

1. Միխեիլ Սուլուաշվիլի
2. Նեստան Կիրթաձե
3. Շալվա Նաթելաշվիլի
4. Մամուկա Ճոխոնելիձե
5. Գիորգի Թարգամաձե
6. Սերգո Ջավախիձե
7. Գիորգի Լիլուաշվիլի
8. Լեվան Չիչուա
9. Ավթանդիլ Մարգիանի
10. Մամուկա Մելիքիշվիլի
11. Նուգզար Ավալիանի
12. Թեյմուրազ Բոբոխիձե
13. Թամազ Բիբիլուրի
14. Դավիթ Բաքրաձե
15. Գիորգի Մարգվելաշվիլի
16. Կոբա Դավիթաշվիլի
17. Ակակի Ասաթիանի
18. Նինո Բուրջանաձե
19. Նինո Ճանիշվիլի
20. Զուրաբ Խառատիշվիլի
21. Քարթլոս Ղարիբաշվիլի
22. Թեյմուրազ Մժավիա
23. Գիորգի Չիխլաձե

2.7 Դիտորդներ և լրատվական լուսաբանում

ԿԸՀ-տեղեկության համաձայն, 2013 թվականի հոկտեմբերի 27-ի Վրաստանի նախագահի ընտրություններին իբրև դիտորդ գրանցված էր 60 տեղական կազմակերպություն (19 746 դիտորդ) և 65 միջազգային կազմակերպություն (1241 դիտորդ), որոնք դիտարկում էին տեղամասի բացմանը, ձայն տալուն և արդյունքների ամփոփմանը: Ընտրությունները լուսաբանելու նպատակով ԿԸՀ-ում հավատարմագրվեցին 152 տեղական և միջազգային լրատվական-կազմակերպություն (1381 լրատվական-աշխատող):

2.8 2013 թվականի ընտրությունների արդյունքները

Նախագահական ընտրությունների արդյունքների համաձայն Գիորգի Մարգվելաշվիլին ձայների 62, 12 % հավաքեց, Դավիթ Բաքրաձեն՝ 21, 72 %, Նինո Բուրջանաձեն- 10, 19 %, Շալվա Նաթելաշվիլին՝ - 2,88 %, և Գիորգի Թարգամաձեն՝ 1,06 %. Մնացած նախագահական թեկնածուների ցուցանիշները 1%-ից չավելացավ:

3. Ընդհանուր քաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանի» ներգրավվելը 2013 թվականի նախագահական ընտրությունների դիտորդական գործընթացին

2013 թվականի նախագահական ընտրությունների համար «Բազմազգ Վրաստանը» դիտորդականծրագրիշրջանակներումիրականացրեցդիտարկումՍամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Նինոծմինդայի ընտրական մարզում մտնող 31 ընտրական տեղամասում, Ախալքալաքիի մարզում մտնող 41 ընտրական տեղամասում, Ասպինձայի ընտրական մարզում մտնող 7 տեղամասում, Ախալցիխեի ընտրական մարզում մտնող 27 տեղամասում, Բորժոմիի ընտրական տեղամասում մտնող 4 տեղամասում: Ընդամենը ծրագրի շրջաններում Սամցխե-Ջավախեթիի շրջանում ընդգրկվեց 110 ընտրական տեղամաս: Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ծրագրի շրջանակներում դիտարկումը իրականացվեց Մառնեուլիի ընտրական մարզում մտնող 33 ընտրական տեղամասում, Բոլնիսիի ընտրական մարզում մտնող 25 ընտրական տեղամասում, Ծալկայի ընտրական մարզում մտնող 12 ընտրական տեղամասում և Գարդաբանիի ընտրական մարզում մտնող 20 ընտրական տեղամասում: Ընդամենը ծրագրի սահմաններում Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ընդգրկվեց 90 ընտրական տեղամաս: Ընդհանուր քանակով Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում ընտրությունների օրը դիտորդական առաքելությունը իրականացվեց 200 ընտրական տեղամասում:

Տարածաշրջան	Մարզ	Շարժական խումբ	Ընտրական տեղամաս	Ընդամենը
Սամցխէ-Ջավախեթի				
Նինոծմինդա	1	5	31	37
Ախալքալաքի	1	9	41	51
Ասպինձա	1	1	7	9
Ախալցիխե	1	5	27	33
Բորժոմի	1	1	4	6
Ընդամենը	**5**	**21**	**110**	**136**
Քվեմո Քարթլի				
Մառնեուլի	1	6	33	40
Բոլնիսի	1	5	25	31
Ծալկա	1	3	12	16
Գարդաբանի	1	5	20	26
Ընդամենը	**4**	**19**	**90**	**113**
Թբիլիսի ԿԸՀ-ի դիտորդ	**0**	0	0	**1**
Ընդհանուր գումարը	**9**	**40**	**200**	**250**

Դիտորդական ծրագիրն իրականացվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 1 դիտորդի, մարզային ընտրական հանձնաժողովի 9 դիտորդի, ընտրական տեղամասերի 200 կարճժամկետ դիտորդների և շարժական խմբերի 40 դիտորդի միջոցով: Ընդամենը ընտրությունների օրը դիտորդական կազմակերպության կողմից մոբիլիզացված էր 250 դիտորդ:

Մեթոդական տեսանկյունից 2013 թվականի հոկտեմբերի 27- ի նախագահական ընտրությունների համար ընտրական օրվա և ընտրություններին հաջորդող ժամանակաշրջանի դիտորդական ծրագիրը իրականացվեց Սամցխե Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում մտնող մի շարք ընտրական տեղամասերում, որտեղ էթնիկական փոքրամասնությունները կազմում են տեղական բնակչության 30%-ից ավելին:

Նախընտրական գործընթացում դիտորդական ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով կազմակերպությունն անցկացրեց հնարավորությունների ընդլայնմանը կողմնորոշված վարժանքային կուրսերի ցիկլ կենտրոնական ընտրական հանձնաժողովի մարզային ընտրական հանձնաժողովի, ընտրական տեղամասերի և շարժական խմբերի դիտորդների համար, նաև մարզային լոջիստիկայի համակարգողների համար:

«Բազմազգ Վրաստանի» ներկայացուցիչներն ակտիվորեն ներգրավված էին Վրաստանի խորհրդարանում ստեղծված ընտրական հարցերով աշխատող ինտերֆրակցիոն խմբի աշխատանքներին և մասնակցում էին ընտրական հարցերի ուղղությամբ տարվող հանդիպումներին և բանավեճերին:

Տեղեկատվության հավաքում, մշակում և արձագանքում

«Բազմազգ Վրաստանի“ գլխավոր գրասենյակում տագնապային ռեժիմով աշխատում էր 10 օպերատոր: Նրանք կազմակերպության դիտորդների հետ անընդհատ ստանում էին տեղեկատվություն այն բոլոր ուշադրության արժանի փաստի մասին, որը կարող էր խանգարել ժողովրդավարական ընտրությունների խնչնդոտմանը, նպաստել կոնկրետ երկու տարածաշրջաններում՝ Սամցխե- Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում:

Ցանկացած քաղաքացի ինքնուրույն կարող էր հաղորդել տեղեկություն խախտումների մասին «Բազմազգ Վրաստանի» թեժ գծին, որը կոնկրետ քաղաքացիների կողմից տրված տեղեկությունը ստանալու և նրան արձագանքելու նպատակով աշխատում էր ամբողջ օրվա ընթացքում:

Դիտորդական ծրագրի իրավաբանական աջակցումը ցուցաբերում էին կազմակերպության իրավաբանները:

PMMG support to the conduction of more free and fair Presidential Elections in Samtskhe-Javakheti and Kvemo Kartli regions





Samtskhe-Javakheti

Districts	DEC	Mobile groups	PECs
Ninotsminda	1	6	29
Akhalkalaki	1	9	44
Aspindza	1	1	5
Akhaltsikhe	1	4	26
Borjomi	1	1	6
Sub-total	5	21	110

Kvemo Kartli

Districts	DEC	Mobile groups	PECs
Marneuli	1	7	33
Bolnisi	1	5	25
Tsalka	1	3	12
Gardabani	1	4	20
Sub-total	4	19	90

PMMG Hot Line +995 32 296 21 25

CEC Hot Line +995 32 251 00 51

www.pmmg.org.ge

pmmg@pmmg.org.ge info@pmmg.org.ge

observers from Tbilisi
observers from Marneuli
observers from Rustavi
observers from Gardabani
observers from Dmanisi

4. Ընտրությունների օրը

Ընտրական տեղամասի բացում և կարգավորում

Ընտրական տեղամասերի գերակշռող մասը (195 ընտրական տեղամաս) ժ. 8:00 –ին , պատրաստ էր ընտրողներին դիմավորելու, իսկ 5 ընտրական տեղամաս՝ ոչ, մասնավորապես #22 Մառնեուլիի ընտրական մարզի #5, #25 և #77 ընտրական տեղամասերը, #25 Ծալկայի ընտրական մարզի #37 ընտրական տեղամասը և #40 Ախալքալաքիի ընտրական մարզի #24 ընտրական տեղամասը:

Դիտորդների կողմից բացահայտվեց տեղամասի աչ համապատասխան կարգավորման երկու դեպք. #22 Մառնեուլիի ընտրական մարզի #83 ընտրական տեղամասում և #41 Նինոծմինդայի ընտրական մարզի #25 ընտրական տեղամասում:

Գրանցվեց հանձնաժողովի անդամների միջև ֆունկցիաների բաժանման համար վիճակահանման ընթացակարգի կարգի խախտման մեկ դեպք՝ #41 Նինոծմինդայի ընտրական մարզի #4 ընտրական տեղամասում:

Նույնականացվեց ընտրական տեղամասում դիտորդին ժամանակին չթողնելու երեք դեպք. #41 Նինոծմինդայի ընտրական մարզի #25 ընտրական տեղամասում, #23 Բոլնիսիի ընտրական մարզի #3 ընտրական տեղամասում և #40 Ախալքալաքիի ընտրական մարզի #55 ընտրական տեղամասում:

Ընթացակարգային խախտում գրանցվեց #22 Մառնեուլիի ընտրական մարզի #55 ընտրական տեղամասում. Դիտորդի տեղեկության համաձայն, վիճակահանության արկղը տեղափոխող հանձնաժողովի միայն 1 անդամը բացահայտվեց 2-ի փոխարեն: Դիտորդի բառացի ցուցումով, նորից կատարվեց վիճակահանություն և խախտումը վերացավ:

Այն ընտրական տեղամասերում, որտեղ կազմակերպությունն իրականացնում է դիտարկումը, 79 դեպքում տեղամասի բացման ընթացակարգին ներկա էր տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր 13 անդամը, իսկ 13 դեպքերում՝ 7 անդամ:

#22 Մառնեուլիի ընտրական մարզի #4 ընտրական տեղամասում ստուգիչ թերթիկը հիմնական արկղում առանց առաջին ընտրողի ստորագրության գցեցին: Նշված խախտման կապակցությամբ կազմակերպության դիտորդը բողոք գրեց, որը սակայն հանձնաժողովի կողմից չբավարարվեց:

Քվեարկություն և ընտրական տեղամասերի փակում

Ընտրողների գերակշռող մասը քվեարկում էր համապատասխան փաստաթղթերի ներկայացման հիման վրա, չնայած մեկ դեպքում, մասնավորապես #22 Մառնեուլիի #31 ընտրական տեղամասում գրանցվեց առանց համապատասխան փաստաթղթերի ներկայացման ձայն տալու 1 դեպք:

Ինչպես նշում են դիտորդների մեծամասնությունը, դրոշմումը ստուգվում էր քվեարկության ողջ ընթացակարգում, միայն չի ստուգվել #22 Մառնեուլիի ընտրական մարզի #31 և #42 ընտրական տեղամասերում: Դիտորդների կողմից գրանցվել է ընտրողների ցուցակում ընտրողի գրաֆայի ուղղությամբ նախօրոք ստորագրած 2 դեպք. #21 Գարդաբանիի ընտրական մարզի #27 և #37 Ախալցիխեի ընտրական մարզի # 1 ընտրական տեղամասում:

«Բազմազգ Վրաստանի» 200 դիտորդից 3-ի վրա իրականացվել է ֆիզիկական ուժի գործադրում/ճնշում, ահազանգում. #22 Մառնեուլիի ընտրական մարզի #51 և #57 ընտրական տեղամասերում, նաև #23 Բոլնիսիի ընտրական մարզի # 51 ընտրական տեղամասում:

«Բազմազգ Վրաստանի» դիտորդների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, քվեարկության գաղտնիությունը խախտվել է 1 դեպքում. #22 Մառնեուլիի ընտրական մարզի #5 ընտրական տեղամասում ստուգիչ թերթիկը հիմնական արկղ ընտրողի քվեաթերթիկի հետ միասին ծրարում դրված գցեցին: Գրվեց բողոք, սակայն բողոքը չբավարարվեց:

#37 Ախալցիխեի ընտրական տեղամասում գրանցվեց դեպք, երբ ընտրողների ցուցակում նախապես ստորագրություններ էին արված ընտրողների գրաֆաների ուղղությամբ:

Գրանցվեց քվեաթերթիկների կեղծման դեպքեր. #22 Մառնեուլիի ընտրական տեղամասի #42 ընտրական տեղամասում կազմակերպության դիտորդը գրանցեց 2 փաստ, երբ գրանցողը ընտրողին հանձնեց արդեն ընդգծված քվեաթերթիկ, որը գրանցվեց տեսահոլովակի վրա: Նշվածից հետո տեղամասում արգելվեց տեսանկարահանումը: Այդ մասին գրանցվեց երկու բողոք: Դրանցից տեսանկարահանումը վերականգնելու բողոքը բավարարվեց:

#22 Մառնեուլիի ընտրական մարզի #57 ընտրական տեղամասում գրանցվեց հանձնաժողովի անդամների կողմից քվեաթերթիկներ գցելու մոտ 10 փաստ: Նույն ընտրական մարզի նույն տեղամասում «Բազմազգ Վրաստանի» դիտորդը գրանցեց լիազորություն չունեցող անձանց: Նույն ընտրական մարզի նույն տեղամասում գրանցված է դիտորդի նկատմամբ ճնշման և ահազանգման փաստեր, որի համար «Բազմազգ Վրաստանի» դիտորդը բողոքարկեց տեղական ընտրական հանձնաժողովին, սակայն բողոքը չբավարարվեց: Այնուհետև նշված բողոքը ներկայացվեց մարզային ընտրական հանձնաժողովին:

#22 Մառնեուլիի ընտրական մարզի #42 տեղամասում գրանցվեց առանց դրոշմը ստուգելու ընտրողների կողմից մասսայաբար ձայն տալու փաստեր: Կազմակերպության դիտորդը գրանցեց փաստերը և ներկայացրեց բողոք այդ մասին, որը սակայն չգրանցվեց, բողոքը ներկայացնելուց հետո ևս ընտրական տեղամասում իրադրությունը չուղղվեց:

«Բազմազգ Վրաստանի» 200-ից 4 դիտորդ գտնում է, որ քվեարկությունը կատարվեց նշանակալի խախտումներով:

Ընտրական տեղամասի փակում և ձայների հաշվում

Դիտորդների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, ընտրական տեղամասերի մեծամասնությունը կազմակերպության դիտորդին հնարավորություն տվեցին հաշվման ընթացակարգի բոլոր փուլերում իրականացնել դիտարկման ընթացակարգը:

Հիմնականում ընտրական տեղամասում ներկա չէին չլիազորված անձիք, չնայած մեկ դիտորդ գրանցեց նման փաստ, մասնավորապես #22 Մառնեուլիի ընտրական մարզի #57 ընտրական տեղամասում:.

5. Քվեարկության օրվա հետ կապված բողոքներ և հայցեր

Դիտորդական կազմակերպության կողմից հայտնաբերված փաստերի և գտած ապացույցների համապատասխան հաստատվում է, որ 2013 թվականի նախագահական ընտրությունները 2012 թվականին անցկացրած խորհրդարանական ընտրություններից տարբերվում է համեմատաբար որոշակի առաջընթացով: Այդ բանը նշվեց նաև ինչպես տեղական այնպես էլ միջազգային դիտորդների կողմից,:

Նախագահական ընտրությունների արդյունքներից մեկը եղավ ընտրական վարչության ներկայացուցիչների բարելավված արհեստավարժական որակը (տեղամասային հանձնաժողովի անդամների կողմից ընտրական կանոնների և ընթացակարգերի պահպանման բարվոքված մակարդակը, նրանց կողմից կազմակերպության դիտորդների նկատմամբ հայտնի գործընկերությունը, նրանց իրավունքների հարգանքը, նրանց գործունեության իրականացման հարցում չխանգարելը և այլն), որն ի վերջո հնարավոր դարձրեց նշանակալից պակասեցնել ընտրական օրենսդրության կոպիտ խախտումների դեպքերը, նույնիսկ այնպիսիք, որոնք լայն հասարակության ուշադրությանն էր արժանացած: «Բազմազգ Վրաստանի» դիտորդները արձանագրեցին ընտրական կանոնների և ընթացակարգերի կոպիտ խախտման ընդամենը մի քանի փաստ: Չնայած գրանցվեց որոշ թերություններ ընտրական տեղամասի բացման և կարգավորման , քվեարկության և տեղամասային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրությունների կազմման ընթացակարգերում:

Պետք է նշել, որ դիտորդները արձագանքեցին էլեկտորալ խախտումներին, այդ թվում ընթացակարգային թերություններին՝ համաձայն նախապես մշակված հրահանգի.

ա) տեղամասային ընտրական հանձնաժողովի հասցեով բանավոր ցուցումներ տալը՝ թերությունները կամ խախտումները իսպառ վերացնելու նպատակով.

բ) Բողոքներ կազմելը և ներկայացնելը տեղամասային և/կամ մարզային ընտրական հանձնաժողովներին, այն դեպքում, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը համապատասխան միջոցներ չի ձեռնարկել բանավոր դիտողության հիման վրա խախտման/թերությունների վերացման հարցով:

Դիտորդների գործունեության դիտարկման արդյունքները բացահայտեցին հետաքրքիր միտում. շատ դեպքերում դիտորդների բանավոր դիտողությունները բավարարվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամների կողմից: Գրվեց միայն բողոքների շարք, քանի որ տեղական ընտրական հանձնաժողովը չբավարարեց դիտորդների բանավոր պահանջները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում ներկայացված բողոքները.

Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեարկության օրը ներկայացվել է 20 բողոք: Դրանցից բավարարվել է 5 բողոքը, իսկ 3-ը տեղափոխվել է մարզային ընտրական հանձնաժողովներ: Մասնավորապես, Բոլնիսիի ընտրական հանձնաժողովներում քվեարկման օրը գրվել է մեկ բողոք, Նինոծմինդայի ընտրական մարզում՝ 3 բողոք (բավարարվել է 1-ը, իսկ մեկը տեղափոխվել է մարզային ընտրական հանձնաժողով), Ախալցիխեի՝ մեկ բողոք, Ախալքալաքին՝ չորս բողոք (բավարարվել է երկուսը, իսկ երկուսը տեղափոխվել են մարզային ընտրական հանձնաժողով), Գարդաբանիի՝ մեկ բողոք, Մառնեուլիի՝10 բողոք (բավարարվել է երկուսը): Բողոքների հիմքը հանդիսացել է տեղամասի բացման և կարգավորման, ձայն տալու և ձայների հաշվման ընթացքում

բացահայտված խախտումները:

Մարզային ընտրական հանձնաժողովներին ներկայացված բողոքները

Քվեարկման ընթացակարգն ավարտվելուց հետո մարզային ընտրական հանձնաժողովում դիտորդական կազմակերպության կենտրոնական գրասենյակից ներկայացվել էին բողոքներ 195 ընտրական տեղամասի ամփոփիչ արձանագրության անվավերության մասին: «Բազմազգ Վրաստանի» ներկայացուցիչները Ախալցիխեի մարզային ընտրական հանձնաժողովում տեղում լրացուցիչ ներկայացրին 21 բողոք:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը չուներ ոչ մի մեկուսամաս.

- N39 Ասպինձայի ընտրական մարզի N02, N04 ընտրական տեղամասերը տեղափոխվել են մարզային ընտրական հանձնաժողով
- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N02 տեղափոխվել է մարզային ընտրական տեղամաս;
- N 39 Մառնեուլիի ընտրական մարզի N57, N62 տեղափոխվել են ընտրական տեղամասեր.
- N 40 Ախալքալաքիի ընտրական մարզի N48, N28, N09, N63 տեղափոխվել են ընտրական տեղամասեր
- N23 Բոլնիսիի ընտրական մարզի N11, N15, N43, N48, N55, N58 ընտրական տեղամասեր
- N21 Գարդաբանիի ընտրական մարզի N12 ընտրական տեղամաս
- N 22Մառնեուլիի ընտրական մարզի # 53 ընտրական տեղամաս
- N41 Նինոծմինդայի ընտրական մարզի N21 ընտրական տեղամաս
- N25 Ծալկայիի ընտրական մարզի N35, N02, N45, N37 ընտրական տեղամասեր
- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N33 ընտրական տեղամաս
- N37 ১Ախալցիխեի ընտրական մարզի N22 ընտրական տեղամաս

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը ուներ միայն մեկ մեկուսամաս.

- N21 Գարդաբանիի ընտրական մարզի N52 ընտրական տեղամաս
- N 22 Մառնեուլիի ընտրական մարզի N9 ընտրական տեղամաս
- N41 Նինոծմինդայի ընտրական մարզի N02 ընտրական տեղամաս
- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N29 ընտրական տեղամաս

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության մեջ ընտրական սուբեկտների գրաֆաների մի մասը բաց էր թողնված.

- N39 Ասպինձայի N02, N12, N15, N17, N18, N19 ընտրական տեղամասեր
- N 37 Ախալցիխեի N25 ও N19 ընտրական տեղամաս
- N40 Ախալքալաքիի N70, N67, N66, N37,N04, N03, N02, N01, N68, N45, N16, N30, N12, N64, N55, N50, N10,N27, N14, N43, N28, N62, N57, N48 ընտրական տեղամասեր
- N 23 Բոլնիսիի N1, N2, N3, N05, N8, N20, N25, N30, N33, N37, N38, N39, N40, N43, N50, N51, N52, N55, N58, N59, N60, N61 ընտրական տեղամասեր
- N 36 Բորժոմիի N08, N10, N15, N21, N22, N24 ընտրական տեղամասեր
- N21 Գարդաբանիի ընտրական մարզի N12, N04, N26საარჩევნო უბნები;
- N22 Մառնեուլիի N01; N06, N08; N10, N13; N14; N15; N19; N20; N24; N25; N27; N36; N39; №40; N41; N42; N49; N50; N51; N55; N56; N57; N58; N59; N60; N62; N63; N68; N72; N78; N82; N83; N84; N12; N09; N38; N87; N16; N33; N65; N73; N77; N23 ընտրական տեղամասեր
- N41 Նինոծմինդայի ընտրական մարզի N22, N02, N27, N05, N06, N23, N14, N09, N20, N26, N34, N01, N10, N07 ընտրական տեղամասեր
- N25Ծալկայի ընտրական մարզի N39, N38, N32, N29, N27, N24, N22, N17, N16, N04, N05, N11, N15, N20, N33, N27, N31, N42 ընտրական տեղամաս

Մարզային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի առևանգման փորձ.

- N39 Ասպինձայի մարզային ընտրական հանձնաժողով:

Քվեարկության ամփոփիչ արձանագրության բնագրի անհամապատասխանություն պատճենի հետ.

- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N02, N13, N27 և N31 ընտրական տեղամասեր
- N40 Ախալքալաքիի ընտրական մարզի N2 ընտրական տեղամաս
- N36 Բորժոմիի ընտրական մարզի N17 ընտրական տեղամաս
- N21 Գարդաբահիի ընտրական մարզի N12 ընտրական տեղամաս
- N22 Մառնեուլիի N11, N18, N30, N43, N44, N47 ՝ N66 ընտրական տեղամասեր
- N41 Նինոծմինդայի ընտրական մարզի N22, N02, N27, N06, N23, N30 և N21 ընտրական տեղամասեր
- N 23 Բոլնիսիի ընտրական մարզի N49 ՝ N59 ընտրական տեղամաս
- N25 Ծալկայի ընտրական մարզի N44, N03, N42 ընտրական տեղամասեր

Քվեարկության ամփոփիչ արձանագրությունը հաստատված չէր ընտրական հանձնաժողովի կնիքով.

- N 40 Ախալքալաքիի ընտրական մարզի N43 ընտրական տեղամաս
- N 22Մառնեուլիի N33 ընտրական տեղամաս

Քվեարկության ամփոփիչ արձանագրության ուղղված արձանագրությունը հաստատված չէր հանձնաժողովի կնիքով.

- N22 Մառնեուլիի N72 ընտրական տեղամաս

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և նախագահի վրա քաղաքական կուսակցության կողմից ներգործության առկայություն.

- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N10 ընտրական տեղամաս

Հիմնական ընտրական արկղում քվեաթերթիկների քանակի շատություն ընտրական ցուցակներում եղած ստորագրությունների համեմատ.

- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N10 ընտրական տեղամաս

Տեղամասում օրենքով թույլատրված քանակից ավելի ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների առկայություն տեղամասում.

- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N21 ընտրական տեղամաս
- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N5 ընտրական տեղամաս

Ներկայացված բողոքներից լիովին բավարարվեց 21, իսկ մասնավորապես՝ 69:

Դատարան ներկայացված հայցեր.

Դատարանում բողոքարկվեց բողոքների բավարարումը մերժելու մասին մարզային ընտրական հանձնաժողովի կողմից ստացված 12 որոշում: Մասնավորապես.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը չուներ ոչ մի մեկուսամաս.

- N37 Ախալցիխեի ընտրական մարզի N02 ընտրական տեղամաս

- N40 Ախալքալաքիի ընտրական մարզի N28 և N09 ընտրական տեղամաս
- N23 Բոլնիսիի ընտրական մարզի N11, N15, N43, N48, N55, N58 ընտրական տեղամասեր

Քվեարկության ամփոփիչ արձանագրության պատճենի և բնագրի անհամապատասխանություն.

- N22 Մառնեուլիի N30 ընտրական տեղամաս

Քվեարկության ամփոփիչ արձանագրությունը հաստատված չէր ընտրական հանձնաժողովի կնիքով.

- N 22 Մառնեուլիի N33 ընտրական տեղամաս

Քվեարկության ամփոփիչ արձանագրության ուղղված արձանագրությունը հաստատված չէր հանձնաժողովի կնիքով.

- N22 Մառնեուլիի N72 ընտրական տեղամաս:

Դատարանը բավարարեց երեք հայցն էլ, որոնք վերաբերվում էին Մառնեուլիի մարզային ընտրական հանձնաժողովի կողմից ընդունած որոշումներին (դատարանն անվավեր համարեց ամփոփիչ արձանագրությունները և հանձնաժողովին հանձնարարեց քվեարկության արդյունքների վերահաշվում):

Բոլնիսիի, Ախալցիխեի և Ախալքալաքիի շրջանային դատարաններ ներկայացված հայցերը դատարանները չքննարկեցին բողոքարկման ժամկետն անցած լինելու պատճառով:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, , որ Բոլնիսիի, Ախալցիխեի և Ախալքալաքիի շրջանային դատարաններ հայցերն ուղարկվեցին բողոքարկելու հաստատված ժամկետի պահպանմամբ: Վրաստանի քաղաքացիական գործընթացային օրենսդրության 61-րդ հոդվածի առաջին մասի համաձայն «Գործընթացային գործողությունը որի կատարման համար էլ ժամկետ է հաստատված, կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24-ը: Եթե բողոքը, փաստաթղթերը կամ փողը փոստին կամ հեռագրին հանձնվեց մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24-ը, ժամկետանց չի համարվում:» Հետևաբար բողոքների ժամնկետը պահպանված է համարվում, եթե հայցը ժամանակին հանձնվի փոստին, չնայած այն բանին, փոստի ցրիչը երբ կհանձնի հասցեատիրոջը:

Թեպետ դատարանը չառաջնորդվեց նշված հոդվածով և կիրառեց այլ իրավական նորմա. Վրաստանի ընտրական օրենսդրության համաձայն, «Ընտրական հանձնաժողովում /դատարանում դիմում/ հայց/ բողոքը մտցված է համարվում համապատասխան ընտրական հանձնաժողովում / դատարանում այն գրանցելու պահից» Երեք շրջանի դատարաններն էլ առավելությունը տվեցին նորմային, որը կազմում է ընտրական օրենսգիրքը և, համապատասխանաբար, դիտորդական կազմակերպության հայցերի քննարկումը մերժեց: Նշանակալից է և այն հանգամանքը, որ դատարանները նման բնույթի որոշումներով օրենքը չեն խախտել:

Չնայած այն բանին, որ հայցերը պատրաստվել են ժամանակին, դատարաններում ներկայացնելու ժամկետի բաց թողումը ստացվել է օբեկտիվ հանգամանքներով: Ներկայացման վերջին ժամկետը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, փաստաթղթերի տեղ հասցնելը պահանջում էր լրացուցիչ ռեսուրս, որը դիտորդական կազմակերպությանը չէր բավականանում:

6. Ընտրությունների արդյունքները

Հանրագումարային տվյալները.

Ընտրողների քանակը ՝ 3 537 719

Ընտրություններին մասնակից ընտրողների քանակը՝ 1 660 976

Անվավեր համարված ընտրական քվեաթերթիկների քանակը՝ 30 101

Ստացված ձայների քանակը համաձայն ընտրական սուբեկտների՝

#	Թեկնածուի անուն, ազգանունը	Ստացված ձայների քանակը	%
1	Թամազ Բիբիլուրի	687	0.04
2	Գիորգի Լիլուաշվիլի	1 909	0.12
3	Սերգո Զավախիձե	2 107	0.13
4	Կոբա դավիթաշվիլի	9 838	0.6
5	Դավիթ Բաքրաձե	354 103	21.72
6	Ակակի Ասաթիանի	1 559	0.1
7	Նինո Ճանիշվիլի	2 276	0.14
8	Թեիմուրազ Բոբոխիձե	356	0.02
9	Շալվա Նաթելաշվիլի	46 984	2.88
10	Գիորգի Թարգամաձե	17 354	1.06
11	Լեվան Չաչուա	3 093	0.19
12	Նեստան Կիրթաձե	762	0.05
13	Գիորգի Չիխլաձե	820	0.05
14	Նինո Բուրջանաձե	166 061	10.19
15	Զուրաբ Խարատիշվիլի	3 718	0.23
16	Միխեիլ Սալուասիվիլի	1 376	0.08
17	Քարթլոս Ղարիբաշվիլի	530	0.03
18	Մամուկա Ճոխոնելիձե	315	0.02
19	Ավթանդիլ Մարգիանի	627	0.04
20	Նըզզար Ավալիանի	664	0.04
21	Մամուկա Մելիքիշվիլի	995	0.06
22	Թեիմուրազ Մժավիա	1 285	0.08
23	Գիորգի Մարգվելաշվիլի	1 012 569	62.12

Աղբյուր. ԿԸՀ-ի ամփոփիչ արձանագրություն և պաշտոնական կայք-էջ
http://www.cec.gov.ge/uploads/other/26/26456.pdf

7. Հիմնական հայտնություններ

Դիտորդական ընթացակարգում հայտնաբերված փաստերի համաձայն, հաստատվում է, որ 2013 թվականի նախագահական ընտրությունները 2012 թվականին անցկացված խորհրդարանական ընտրությունների համեմատ ավելի առաջընթաց էր, այս բանը նշեցին նաև տեղական և միջազգային դիտորդները:

Կազմակերպության դիտորդների մեծամասնությանը հնարավորություն տրվեց անսահմանափակ կերպով իրականացնել դիտարկում ընտրական օրվա բոլոր ընթացակարգերում:

Նախագահական ընտրությունների հայտնություններից մեկը եղավ ընտրական վարչության ներկայացուցիչների բարվոքված արհեստավարժական աստիճանը, որը վերջին հաշվով հնարավոր դարձրեց նշանակալիորեն պակասեցնել ընտրական օրենսդրության կոպիտ խախտման դեպքերը, այնպիսի դեպքերի ներառմամբ, որոնք լայն հասարակության ուշադրությանն են արժանանում: «Բազմազգ Վրաստանի» դիտորդները գրանցեցին ընտրական կարգ,րի և և ընթացակարգերի կոպիտ խախտումների միայն մի քանի փաստ: Թեպետ գրանցվեցին որոշ թերություններ, այդ թվում ընտրական տեղամասի բացման և կարգավորման, քվեարկության և տեղամասային ընտրական հանձնաժողովի հանրագումարային արձանագրությունների կազմման ընթացքում, սակայն դրանք որևէ նշանակալից ներգործություն չունեցան ընտրական գործընթացի օրինական լինելու վրա: Հատկանշական է, որ խախտումների գերակշռող մասը առաջ էին եկել հանձնաժողովի անդամների ցածր պատրաստության աստիճանի պատճառով: Ընտրությունների ադմինիստրացման ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից թույլ տրված թերությունները պարզ վկայում են ընտրական վարչության ներկայացուցիչների ցածր մակարդակը: Դա խոսում է այն մասին, որ պետք է բարձրացնել վարչակազմի մակարդակը, որպեսզի ապագա ընտրությունների ժամանակ առավելագույնս նվազեցվի խախտումների քանակը:

Դիտորդների գործունեության դիտարկման արդյունքները բացահայտեցին հետաքրքիր միտում. շատ դեպքերում դիտորդների բանավոր դիտողությունները բավարարվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամների կողմից: Քվեարկության ընթացքի հետ կապված գրվեց միայն բողոքների շարք, քանի որ տեղական ընտրական հանձնաժողովը չբավարարեց դիտորդների բանավոր պահանջները:

Ուշադրության է արժանի այն հանքամանքը, որ մի շարք ընտրական տեղամասերում հանձնաժողովի անդամները դժվարանում էին վրացերեն լեզվով գրված բողոքների քննարկումը՝ պետական լեզվին բավարար չտիրապետելու պատճառով: Թեպետ 176 ընտրական տեղամասում ազգային փոքրամասնություններին պատկանած տեղամասային ընտրական հանձնաժողովի մեծամասնությունը տիրապետում էր պետական լեզվին:

Դրական գնահատականի է արժանի ընտրական հանձնաժողովի վարչության գործունեության մեջ եղած փոքրամասնության ներգրավման մակարդակը: Այն ընտրական տեղամասերում, որտեղ դիտարկում էր կազմակերպությունը, ընտրական վարչությունը հիմնականում փոքրամասնությամբ բնակեցված շրջաններում, կոմպլեկտավորված էր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներով: 136 ընտրական տեղամասում հանձնաժողովի քարտուղարը կամ նախագահը ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ էին:

Բացի վերոհիշյալից, դիտորդական ծրագրի իրականացման պրոցեսում բացահատվեցին մի շարք անհրաժեշտություններ, որոնց հետագայում հարկավոր կլինի համապատասխան

արձագանքում.

- Պետք է նշել, որ ժամկետները կարճ են, բավական չեն հիմնավորված բողոքների և հայցերի ներկայացման համար:
- Դատարանում ընտրությունների հետ կապված գործի հարուցման համար սահմանված պետական մաքսը բարձր է::
- Օրենքի չի թույլատրում ընտրողին ներկայացնել բողոքներ հանձնաժողովներում և դատարաններում՝ կապված ընտրական օրենսդրության ցանկացած խախտման հետ:
- Գոյություն չունի միասնական մոտեցում կուսակցության և քաղաքացիական հասարակական կազմակերպության իրավաբանների կողմից ընտրական օրենսդրության պարզաբանման ուղղությամբ, որն առաջ է բերում ընտրական ընթացակարգերի ընկալման ուղղությամբ միասնական չափանիշի բացակայություն:

Այն տեղամասերում, որտեղ կազմակերպությունը իրականացրել է դիտարկումը, ընտրական վարչության կազմում կանայք լայն սպեկտրով էին ներկայացված, թեպետ նրանք պակաս տեղեր էին զբաղեցնում որոշում կայացնող աշխատակիցների դիրքերում (նախագահ կամ քարտուղար): Մասնավորապես, 192 ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամների մի մասը կազմված էր կանանցից, իսկ նախագահի կամ խարտուղարի դիրք 51 կին էին զբաղեցնում:

Նախընտրական ժամանակաշրջանի, նաև որպես ընտրության օրվա ընդհանուր գնահատմանհիմանվրակարելիէեզրակացնել,որերկրիէթնիկականփոքրամասնությամբ բնակեցված տարածաշրջաններում դարձյալ ցածր է ընտրողների էլեկտորալ կրթության մակարդակը, ինչը, վերջին հաշվով, խոչընդոտ է հանդիսանում ընտրական պրոցեսում նրանց քանակական և որակական ներգրավման գործընթացում: Հատկապես աչքի է ընկնում քաղաքական սուբեկտների կողմից փոքրամասնության տարածաշրջաններում ներգրավման պակասությունը: Տեղական մակարդակով համարյա թե գոյություն չունի քաղաքական երկխոսության պրակտիկա:

8. Հանձնարարականներ

Հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրությունների վրա հենվելով, «Բազմազգ Վրաստանը» մշակել է տարբեր բնույթի հանձնարարականներ տարբեր հետաքրքրություններ ունեցող կողմերի համար, որպեսզի ապագայում էլ ավելի կատարելագործվի ընտրական գործընթացը և այն լիարժեք կերպով գա համապատասխանության արդար և ժողովրդավարական ընտրությունների միջազգային և տեղական չափանիշներին:

Ընտրական վարչություն.

- Չնայած ընտրական վարչության անդամների արհեստավարժական որակի որոշակի բարելավմանը, դեռևս գոյություն ունի տեղամասային և մարզային հանձնաժողովների անդամների հիմնավոր վարժանքների անհրաժեշտությունը, հատկապես ընթացակարգային հարցերում, այդ թվում ձայները հաշվելու և ամփոփիչ արձանագրությունը կազմելու:

- Էթնիկական փոքրամասնությամբ կոմպակտ բնակեցված ընտրական մարզերում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության և նշանակման գործընթացում լայնորեն էր հաշվի առնված նրանց լեզվական ունակություերը, վրացերեն լեզվին պատշաճ տիրապետումը:

- Ընտրական վարչությունը պետք է ցուցաբերի բարի ցանկություն մտցնելու և անրապնդելու փոքրամասնության լեզվով դիմում/հայց ներկայացնելու և քննարկելու պրակտիկան: Ցանկալի է, որ ընտրական օրենսդրության մեջ մտցվի համապատասխան փոփոխություն:

Բողոքներ և հայցեր.:

- Բողոքներ և հայցեր ներկայացնելու ժամկետները պետք է երկարացվեն, որպեսզի բողոքարկողն ունենա բավական հնարավորություն մշակել փաստերը և պատշաճորեն պատրաստել ապացույցը:

- Անհրաժեշտ է դատարանում ընտրությունների հետ կապված գործը հանձնելիս սահմանված պետական մաքսը վավերացվի կամ լինի նվազագույնը, որպեսզի սա խոչնդոտ չհանդիսանա հետաքրքրվող կողմերի համար բողոքների և հայցերի կազմման գործընթացում:

- Օրենքը պետք է իրավունք տա ընտրողներին, օրենսդրության ցանկացած խախտման հետ կապված բողոք ներկայացնել ընտրական հանձնաժողովներում և և հայցեր՝ դատարաններում:

- Գոյություն ունի կուսակցություն և քաղաքացիական հասարակական կազմակերպության իրավաբանների վարժանքների անհրաժեշտություն ընտրական օրենսդրության մեջ, խախտումների հայտնաբերման և ապացույցների հավաքման, բողոքների ներկայացման ընթացակարգերում և արդյունավետ բողոքների կազմման և ներկայացման ունակություններում:

Էթնիկական փոքրամասնությունների մասնակցությունը

Արդյունքներից պարզ երևում է հիմնախնդիրների և հրավերների շարք, որոնց հացթահարումը չիստ նշանակալից է, որպեսզի բարձրացվի ընտրական գործընթացում

էթնիկ փոքրամասնության պատկանող ընտրողների քանակական և որակական ներգրավման մակարդակը. ընտրական հարցերի իմացության և ունակությունների պակաս, սեփական ընտրական իրավունքների, նաև քաղաքական համակարգի ըմբռնման պակաս, քաղաքական սուբեկտների ծրագրերում ինքնակողմնորոշման պակաս, ընտրական գործընթացի կարևորության և բնույթի ընկալման պակաս: Հիմնախնդրի լուծումը պահանջում է տարբեր կողմերի աստիճանական և հիմնավոր աշխատանք՝ փոքրամասնության տարածաշրջաններում ընտրողների ուսուցման համապատասխան ծրագրերի իրականացման նպատակով: Այս ուղղությամբ

- **Տեղական քաղաքացիական հասարակական կազմակերպությունները, նաև միջազգային կազմակերպությունները ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում էթնիկական փոքրամասնության խմբերի համար պետք է իրականացնեն լայնածավալ ուսումնական ծրագիր ընտրողների քաղաքացիական և քաղաքական հարցերով: Լրատվամիջոցները ակտիվ մասնակցություն պետք է ունենան ընտրողների էլեկտորալ կրթության մակարդակի բարձրացման գործընթացում:**

- **Կրթական հաստատությունները ընտրողների ուսուցման էլեմենտը պետք է մտցնեն դպրոցների ավարտական դասարանների և բարձրագույն հաստատությունների ուսումնական ծրագրերի մեջ, ոչ ֆորմալ կրթության և ավարտական դասարանների աշակերտների ու համալսարանի ուսանողների մեջ գիտակցության բարձրացման միջոցառումներին աջակցելու նպատակով:**

- **Ընտրական վարչությունը պետք է անջատմոնիթորինգ խմբերի հարցերով հատուկ աշխատանքային խմբի գործունեություն ծավալի, ընդլայնի նրա գործունեության ոլորտը, շարունակի տեղամասային և մարզային ընտրական հանձնաժողովների էթնիկական փոքրամասնության անդամների վարժանքները:**

- **Քաղաքական կուսակցությունները պետք է ներդնեն լրացուցիչ ուժեր էթնիկական փոքրամասնության տարածաշրջաններում անջատ խմբերի հետ աշխատելու, սեփական ծրագրերի մասին ընտրողներին տեղեկացնելու և տեղական մակարդակով քաղաքական երկխոսությանն աջակցելու համար:**

9. Տեղեկատվություն Ընդհանուր - քաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանի» մասին

Ընդհաուր-քաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը»(PMMG) գրանցվել է 1999 թվականի հունիսի 1-ին, որպես ոչ կառավարական կազմակերպություն: PMMG-ն միավորում է Վրաստանի քաղաքացիներին, որոնք պատկանում են երկրում ապրող տարբեր էթնիկական, կրոնական և լեզվական խմբերին: Այն ներկայացնում է հովանի կազմակերպություն, որն իրականացնում է ռեսուրսներով աջակցություն աշխատակիցներին 18 համայնքային և 56 հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ, որոնք աշխատում են Վրաստանում բնակվող տարբեր էթնիկական, կրոնական և լեզվական խմբերի հետ և նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում: PMMG-ն օգտվում է Եվրոմիության գործընկեր կազմակերպության կարգավիճակից: Նա նաև ներկայացնում է «Հարավային Կովկասում ատելության դեմ պայքար» միջազգային կոալիցիայի շահերը: Նա եվրոպական ազգերի դաշնային միության անդամ է:

2005 թվականից PMMG-ն ընդգրկված է Կախեթիի, Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջաններում ընտրական դիտորդման ծրագրերի իրագործման մեջ: PMMG-ի միջոցով ներկայացված արդյունքները, առաջարկությունները և հանձնարարականները պարբերաբար տարածվում են հետաքրքրվող կողմերի միջև, ներառյալ ԿԸՀ-ն: Կազմակերպության կողմից մշակված հանձնարարականները ընտրական ոլորտի քաղաքականության մասին մեծ մասամբ հաշվի է առնվել և ընդունվել համապատասխան հետաքրքրվող կողմերի և տեղական կազմակերպությունների կողմից:

PMMG-ի գործունեության հիմնական ուղղություններն են. անպաշտպան խմբերի, առաջին հերթին էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, աջակցում և նրանց կարողության զարգացում, նաև բոլոր մակարդակներով նրանց ակտիվ քաղաքացիական մասնակցության համար համապատասխան պայմանների ստեղծում, հակամարտությունների լուծում, խաղաղության և քաղաքացիական համաձայնության աջակցում, մարդու իրավունքների չափանիշների և մարդու իրավունքների պաշտպանողների պաշտպանության դիտարկում, ժողովրդավարական վերակառուցման և եվրոպական արժեքների աջակցում, տեղական ինքնակառավարում և տեղական համայնքների զարգացում, մշակույթների միջև երկխոսությունների և փոփկապերի զարգացում, հասարակության մեջ էթնոսամիջյան փոխադարձ կապերի ներդաշնակության հետքերով քայլք, ընտրողների ուսուցում, ընտրությունների դիտարկում և անպաշտպան խմբերի արդյունավետ քաղաքական , քաղաքացիական և ընտրական ներգրավման աջակցում:

Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ PMMG-ի պաշտոնական կայք-էջում ՝ http://pmmg.org.ge/newsite

30 YEARS
NDI

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

NED
National Endowment
for Democracy
Supporting freedom around the world

EUROPEAN
ENDOWMENT FOR DEMOCRACY

OPEN SOCIETY GEORGIA FOUNDATION
ფონდი ღია საზოგადოება საქართველო